

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ե. Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Անցյալ դարի վերջից աշխարհն ապրեց հեղաշրջում՝ իրականացավ մարդկային գործունեության բոլոր ուղղությունների էկոլոգիացում: Հատկապես այն առավել կարևորվեց արդյունաբերության բնագավառում: Պատահական չէր, որ շատ երկրներում, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ-ում սկսված բնապահպանական շարժումը ձևավորվեց որպես «կանաչ հեղափոխություն»՝ բերելով այդ մեծ կայսրության կործանմանը: Այդպես եղավ նաև մեր երկրում՝ Հայաստանում, երբ «Նաիրիտի» բնապահպանական գործունեության դեմ սկսված գործունեությունների շղթան օգտագործվեց համաժողովրդական շարժման զարգացմանը՝ բերելով երկրում քաղաքական փոփոխությունների: Ցավոք դրանք ուղեկցվեցին նաև բացասական տնտեսական և սոցիալական բարդությներով, հավանաբար, հատուկ բոլոր հեղափոխություններին:

Ընդհանրապես, բնության համընդհանուր կապի հետազոտությունները հասարակության համար ենթադրում են գիտության տարբեր ճյուղերի լայն կիրառում, տարբեր ոլորտների գիտնականների համագործակցություն: Օրինակ, տեխնիկական գիտությունները կոչված են մշակելու նոր էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիական գործընթացներ՝ ստեղծելու արդիական նախագծեր անթափոն արտադրությունների կազմակերպման, արտադրական թափոնների վերօգտագործման, արտադրական անցանկալի, շատ դեպքերում շրջակա միջավայրը խիստ աղտոտող թափոններից վնասագերծման համար, ստեղծելու անխափան հսկիչ-չափիչ սարքավորումներ՝ էկոհամակարգի հսկողության իրականացման համար:

Քանի որ բնապահպանական խաթարումները ուղղակի և անուղղակի արտացոլվում են կենսոլորտի վրա, դրանք դառնում են նաև բժշկա-կենսաբանական հետազոտությունների

դիտակետ՝ հատկապես նպաստելով մարդու առողջական խնդիրների լուծմանը: Խնդրի սոցիալական նշանակությունը ակնհայտ է հասարակական գիտությունների տեսանկյունից: Ինչպես նշվել է վերևում, բնապահպանության խնդիրները սերտորեն կապված են քաղաքականության հետ, ինչպես նաև տնտեսության և սոցիալական միջավայրի հետ, այսինքն՝ ներկայացնում են կայուն զարգացման սկզբունքների կարևորագույն բաժնեմասը (1): Սա առաջացնում է անհրաժեշտություն դիտարկելու վերոնշյալ խնդիրները տարբեր տեսանկյուններից. փիլիսոփայության, սոցիալական, քաղաքականության, իրավաբանության, բնապահպանության, տնտեսագիտության և այլն:

Որպես գիտության առանձնակի ճյուղ՝ բնապահպանությունը սկսել է ձևավորվել միայն 20-դարում: Սակայն հետազայում պարզ դարձավ, որ բնապահպանության ոլորտում հիմնավոր գիտական խնդիրները կարող են լուծվել միայն տարբեր գիտությունների շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների հետ ինտեգրման հենքի վրա՝ իրականացնելով համախմբված տարածքային էկոհամակարգային գիտական հետազոտություններ: Ուստի նկատի ունենալով բնապահպանության շրջակա միջավայրի պահպանության խնդրի բացառիկ արդիականությունը՝ կարևորագույն խնդիր են դառնում հիմնարար համախմբված հետազոտությունները, որոնք ուղղված են բնապահպանության գիտական հետազոտությունների (2):

Ակնհայտ է, որ այդ ամենի մշակումն ու հետազոտությունները պահանջում են համապատասխանաբար այլ գիտությունների համատեղ զարգացմանը – սոցիոլոգիայի, քաղաքագիտության, իրավագիտության, տնտեսագիտության, ներառյալ ճշգրիտ և տեխնիկական գիտությունները:

Տվյալ հոդվածում դիտարկվում են բնապահպանության և շրջակա միջավայրի խնդիրների տնտեսական, իրավական, տեխնիկա-տեխնոլոգիական ուղղվածությունը:

Սոցիալ-տնտեսական ուղղվածությունն արտահայտում է ուղիղ և հակառակ ազդեցություններ հասարակության և բնութ-յան տարբեր սոցիալական համակարգերի միջև գիտական հե-ղաշրջման պայմաններում: Ընդհանրապես, բնապահպանա-կան խնդիրների լուծման ժամանակ կամ արդյունքում ծագած սոցիալ-տնտեսական խնդիրները պայմանավորում են դրանց գնահատման անհրաժեշտությունը: Այսպես, սոցիալական արդյունքը որոշվում է շրջակա միջավայրի պահպանման մի-ջոցառումների ժամանակ առաջացած ցուցանիշների տարբե-րությամբ, որոնք բնութագրում են սոցիալական միջավայրի բնութագրական փոփոխությունները: Տնտեսական արդյունա-վետությունը բնորոշվում է տնտեսական արդյունավետության հարաբերությամբ բնապահպանական ծախսերի ծավալին: Այս երկու գործոնները օգտագործվում են բնապահպանական ծախսերի փաստացի մակարդակի, ինչպես նաև ծախսերի նորմատիվային ցուցանիշների գնահատման համար(3-4): Ս-րանք հիմք են ծառայում հետագայում հաշվարկելու այն ծախ-սերը, որոնք պետք է իրականացվեն վտանգավոր, թունավոր արտանետումների վնասագերծման և շրջակա միջավայրի անհրաժեշտ վիճակի պահպանման համար(5): Նման գնա-հատականը խիստ էական է գլոբալ խնդիրների լուծման հա-մար: Այդպիսի օրինակները շատ են: Բազմիցս թե՛ գիտական հոդվածներում, թե՛ զանգվածային լրատվամիջոցներում քննարկված մեզ համար խիստ կարևոր Մեանի խնդրից բացի, գլոբալացման պայմաններում կան առավել հակասական օրի-նակներ: Դրանք են՝ օզոնային շերտի վերացումը, իր մեջ նե-րառելով համաշխարհային կարևորագույն խնդիր, դարձել է բազմաթիվ միջազգային փաստաթղթերի և գործողությունների ընդունման նախահիմք, ինչպիսին է օրինակ, Կիոտոյի փաս-տաթուղթը:

Չերնոբիլյան աղետը, կապված ռադիոակտիվ արտա-նետման հետ, հնդկական Բհոպալ քաղաքի ողբերգությունը՝ կապված չքայքայվող օրգանական միացությունների արտա-նետման հետ, որոնք մտել են նույնիսկ էկոլոգիական բառա-

րաններ, որպես հատուկ անուններ, երբ անհրաժեշտություն է գալիս քննարկել շրջակա միջավայրի ռադիոակտիվ վարակման, կամ կայուն օրգանական նյութերով թունավորման խնդիրները: Իսկ Արալյան ծովի վերացման, Ազովի ծովի խնդիրները դարձել են համաեվրոպական ճգնաժամային խնդիրներ:

Իրավական ուղղվածությունն իշխում է ի սկզբանե: Հողի, անտառների, ընդերքի մասին օրենքը, համարվում է ազգային սեփականություն և ստեղծված են խորը երաշխիքներ նրանց ճիշտ օգտագործման համար: Այն անհրաժեշտ է միասնական պետական քաղաքականություն իրականացնելու համար: Այստեղ տեղին է բերել Ռ-Դ նախկին նախագահ Դ.Մեդվեդևի խոսքերը՝ «Այսօր բնապահպանական հարաբերությունները կարգավորում են էկոլոգիական գործունեությունը իրար հետ չկապված, հաճախ իրար հակասող օրենքներով»՝ հնչած 2010թ. Ռ-Դ Շրջակա միջավայրի պահպանության պետական կարգավորման կատարելագործման վերաբերյալ Պետական խորհրդի նախագահության նիստում: Այդ պատճառով շրջակա միջավայրի պահպանության իրավական կողմը պետք է ձևակերպել այնպիսի օրենքով սահմանված, որն ուղղված է շրջակա միջավայրի ընդհանրական պահպանությանը և բնական հարստությունների ռացիոնալ օգտագործմանը: Սահմանելով այդպիսի օրենք՝ կարգավորում են բնապահպանության ոլորտում հասարակական հարաբերությունները, որի արդյունքում առաջանում է բնապահպանական իրավահարաբերությունների համախմբվածություն:

Շրջակա միջավայրի պահպանության իրավական կողմը կարելի է ձևակերպել որպես օրենքով սահմանված, որն ուղղված է շրջակա միջավայրի պահպանությանը և ռացիոնալ օգտագործմանը, բնապահպանական հարստությունների կրկնապատկմանը (6-7): Սահմանելով այդպիսի օրենք՝ կարգավորվում են հասարակական հարաբերությունները բնապահպանության ոլորտում, որի արդյունքում առաջանում են

բնապահպանական իրավահարաբերությունների համախմբվածություն:

Բնապահպանության իրավական կողմին բնորոշ են հետևյալ սկզբունքները, որոնցից են.

- բնական պաշարները կազմում են պետական սեփականություն և նախատեսված են միայն համընդհանուր օգտագործման համար: Պահպանման ենթակա են բնության բոլոր օբյեկտները – ինչպես շահագործման ենթակա, այնպես էլ ոչ
- բնական պաշարների արդյունավետ օգտագործումը
- բնական պաշարների արդյունավետ օգտագործման հսկողությունը
- իրավական պատասխանատվության ենթարկել շրջակա միջավայրի օրինախախտության համար:

Բնապահպանության բնագավառում օրենսդրական կառավարման կատարելագործումը պետք է հենվի հետևյալ սկզբունքներին՝

1. հասարակության սահմանադրական իրավունքի երաշխավորում էկոլոգիական անվտանգության խնդիրների այնպիսի լուծման նպատակով, որոնք դրական ազդեն շրջակա միջավայրի վրա,
2. շրջակա միջավայրի վրա վտանգավոր ազդեցության պարտադիր և մշտական իջեցում, վերացում,
3. պետական էկոլոգիական վերահսկման կարգավորում,
4. բնապահպանական օրենսդրական խախտումների հանդեպ ճնշումների ուժեղացում,
5. առաջավոր տեխնոլոգիաների բնապահպանական խիստ պատասխանատվությամբ կիրառման համար պետական աջակցություն,
6. էկոլոգիական խնդիրների վերաբերյալ հրապարակայնություն,
7. բնապահպանական միջոցառումների համար բյուջետային միջոցների ավելացում:

Շրջակա միջավայրի պահպանման, դրա վիճակի բարելավումն իրականացնելու համար մշակվել են բազմաթիվ սանիտարա-հիգիենիկ ցուցանիշներ, չափանիշներ, անվտանգության համակարգեր, որոնք ապահովում են օպտիմալ պայմաններ մարդու կենսագործունեության համար:

Սանիտարա-հիգիենիկ հետազոտությունները պետք է ուղղված լինեն նրան, որ շրջակա միջավայրի փոփոխության տեմպերը չգերազանցեն կենդանի օրգանիզմի գոյատևման արագ զարգացմանը: Հետևաբար, օրգանիզմի հարմարվողականության կենսաբանական նորմերի հնարավորությունները կարևոր սկզբունքներ են(8):

Այս երևույթի համար կարևոր է նաև սանիտարա-հիգիենիկ կանխատեսումը ապագայում շրջակա միջավայրի համար, որը նպատակ ունի պահպանելու և բարելավելու բնակչության առողջական խնդիրները(9): Նմանատիպ կանխատեսումները պետք է ոչ միայն ապահովեն տարբեր գիտատեխնիկական զարգացում, այլև ուղղորդեն զարգացման առավել հիգիենիկական տարբերակներ:

Տեխնիկա-տեխնոլոգիական տեսանկյուն - բնության շրջակա միջավայրը ենթադրում է կազմակերպել արտադրությունը անթափոն կամ թափոնների վերօգտագործման սկզբունքներով: Բնության պահպանության խնդիրների կանոնակարգած լուծումը սկսվեց ձևավորվել հարաբերականորեն վերջերս, որը պայմանավորեց գիտության հզոր աճ, հատկապես ճարտարագիտության բնագավառում: Ինչպես նշվել է վերևում, սկզբնական շրջանում բնապահպանությունը զարգանում էր հիմնականում որպես կենսաբանական գիտության մաս՝ հետագայում նպատակ ունենալով որպես կենդանի բնության պահպան ձևավորվելու գիտություն: Սակայն այն ստացավ նաև նոր ուղղվածություն, երբ ակնառու դարձավ մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի,բնության վրա:

Շամանակակից տեխնոլոգիական արտադրությունը թույլ է տալիս իրականացնել արդյունաբերության մեջ օդի և ջ-

րի խորը մաքրում՝ պահանջելով խոշոր ֆինանսական միջոցների ներդրում: Պատահական չէ, որ զարգացած երկրներ այցելողները զմայլվում են «Դուք մտնում եք էկոլոգիապես մաքուր քաղաք, գյուղ և այլ ապրելավայր» գովազդով: Սակայն, նոր զարգացող և տնտեսապես հետամնաց, «երրորդ աշխարհի երկրները» չեն կարողանում լուծել նման խնդիրներ:

Նոր տեխնոլոգիական գործընթացների մշակումը, որոնց հիման վրա կարող է ստեղծվել անթափոն արտադրություն, ապահովում է ոչ միայն բարձր տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ, այլ նաև բնական միջոցների համախմբված օգտագործում, ապահովելով դրանով, օրինակ, ընդերքի արդյունավետ օգտագործում: Սակայն անցումը անթափոն տեխնոլոգիաների անմիջապես իրականացնել հնարավոր չէ ամեն մի երկրի համար՝ ելնելով տնտեսական տեսանկյունից: Տեխնոլոգիապես բնապահպանական խնդիրներ լուծող աշխատանքների անցումը իրատեսական է, սակայն դանդաղ է անցման ճանապարհը, իսկ հետագայում նաև անթափոն ցիկլի իրականացման գործընթացը մտնում է փակուղի, որոշակի տնտեսական խնդիրների իրականացման պատճառով:

Տնտեսության բնապահպանության հարցերը դարձել են տնտեսագիտության առանձին ճյուղերի համար առանձնահատուկ օբյեկտ: Նրանք ուսումնասիրում են արտադրական հարաբերությունները ոչ թե մարդկանց միջև, այլ տվյալ կոնկրետ դեպքում արտադրական հարաբերությունները, որոնք կուտակված են հասարակության զարգացման և շրջակա միջավայրի միջև(10):

Բնապահպանական ապահովվածություն ունեցող երկրների տնտեսության զարգացման կարևոր խնդիրն է համարվում այնպիսի օրինաչափությունների հետազոտումը, որոնք թույլ կտան օգտագործելու սեփական երկրի բնական պաշարները, նպատակ ունենալով բավարարել պահանջմունքները: Միաժամանակ կարևորվում է նման երկրների այդ փորձի փոխանակումն այլ երկրների հետ:

Առանձնակի նշանակություն ունեն խնայողական մոտեցումը բնական պաշարների նկատմամբ, ինչպես նաև ավելի արդյունավետ ուղիների ընտրությունը դրանք կիրառելու համար(11):

Դա իր հերթին պահանջում է հասարակական աշխատանքի ծախսերի բաշխում, որոնք անհրաժեշտ են բնական պաշարների ներդրման համար արտադրության և սպառման ոլորտում: Բնական պաշարների արդյունավետության ցուցանիշներ են համարվում հասարակական արտադրության օպտիմալ ծախսերին հասնելը: Տնտեսության բնապահպանական խնդիրները բարձրացնում են հետևյալ հարցերը.

- ինչպես առավել արդյունավետ կիրառել արտադրության և սպառման ոլորտում գործող իրական պաշարները,
- ինչպիսին են տնտեսապես ավելի նպատակահարմար այն մեթոդները, որոնք բացառում են շրջակա միջավայրի աղտոտումը:

Շրջակա միջավայրի պահպանման համար իրականացվող քաղաքականությունը կախված է երկրի սոցիալ-տնտեսական մակարդակից, որից էլ բխում է բնապահպանության նկատմամբ տարվող քաղաքականությունը: Մեր կարծիքով, վերոնշյալ ուսումնասիրություններից ստացված հստակ գործնական տվյալները թույլ կտան եզրահանգելու երկրի էկոլոգիական վիճակի, բնական պաշարների քանակական, անթափոն օգտագործման վերաբերյալ: Նման խնդիրների լուծումը կարևորվում է մեր երկրի համար, որն ունի սահմանափակ տարածքային և բնական պաշարների առկայության սահմանափակ հնարավորություններ:

Առանցքային բառեր: Շրջակա միջավայրի պահպանություն, թափոններ, անթափոն արտադրություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, իրավագիտություն, կառավարում, կարգավորում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ս. Միջազգային բնապահպանական ռազմավարությունը. «Տնտեսագետ», Երևան, 2004, 144 էջ:
2. Коробкин В.И., Передельский Л.В. Экология в вопросах и ответах: Учеб. Пособие для вузов.- Ростов н/Д: Феникс, 2002.
3. Экология и экономика природопользования. Учебник для ВУЗ-ов., ЮНИИТИ-Дана, Единство, 2002, 519с.
4. Голуб. А. А, Струкова Е. Б. Экономика природных ресурсов. Изд.Аспект пресс, -М., 2001, 319с.
5. Бабаян Э., Акопян М. Анализ эколого-экономических параметров и экологическое состояние Лорийского марза. “Современные социально-экономические проблемы РА”, сб.науч.статей ИЭИ МФиЭ., Ереван, 2004, стр. 482-490.
6. “Об охране окружающей среды”, Федеральный закон РФ, № 7-ФЗ, 2002.
7. Петров В.В.Экологическое право России; Учебник для вузов.-М.:ВЕК, 1995.
8. Бурков В., Щепкин А. Экологическая безопасность.- М.,ИПУ РАН, 2003,92с.
9. Экология и защита биосферы: В кн.-М:Изд.объед. “Международный дом сотрудничества”, 1996.
10. Бабаян Э., Аревшатян Г. Этапное рассмотрение инвестиционного процесса. “Современные социально-экономические проблемы РА”, сб.науч.статей ИЭИ МФиЭ., Ереван, 2004, стр.341-348.
11. Վախիսյան Լ. Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքները: ԵՊՀ-ի հրատ., Երևան, 2004, 264 էջ:

Е. Г. ТОРОСЯН
ОСНОВНЫЕ ЗАДАЧИ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ
СРЕДЫ

Резюме

В статье рассматриваются экологические и природо-охранные проблемы экономической, правовой, технической и технологической направленности.

Социально-экономическое направление отражает прямое и обратное воздействие на различные социальные системы общества и природы в условиях научной революции.

Правовую сторону охраны окружающей среды можно сформулировать как закон, направленный на защиту окружающей среды и рациональное использование природных ресурсов с целью удвоения экологического богатства.

С технической и технологической точки зрения – охрана окружающей среды природы предполагает организацию производства по принципу использования отходов или по безотходному принципу.

Ключевые слова. Охрана окружающей среды, выбросы, безотходное производство, социология, политология, правоведение, экономика, управление, регулирование.

Ye. G. TOROSYAN
THE PRINCIPAL PROBLEMS OF ENVIRONMENTAL
PROTECTION

Summary

In this article is considered economic, legal, technical and technological direction of ecological and environmental problems.

In condition of scientific revolution social and economic direction reflects direct and opposite impacts on different social systems of society and nature.

The legal protection of environment can be formulated as a law aimed at environmental protection and rational utilization as well natural resources enrichment.

Technical and technological approach finds that the natural environment assumes the organization of production without waste or waste utilization principles.

Key words: environmental protection, pollutant, green production, sociology, politology, jurisprudense, economics, managment, regulation.